№ 95 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29 1877 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29 № 95

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1878 թվից

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնալու։ Մենք կը ստանանք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում։

ՌՈՒՆԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ մի տարի վերջացաւ։—Ներքին տեսութիւն։ Գիշերապահների խնդիրը։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Նամակ Խարկովից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Թիւրքիա։ Անգլիա։ Նամակ Ֆրանսիայից։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՏԱՐԻ ՎԵՐՋԱՑԱՒ

Եկող 1878 թվից մենք, ինչպէս ընթերցողին յայտնի է, դիտաւորութիւն ունենք հրատարակել «Մշակը» ամեն օր։ Այդ կը լինի առաջին օրինակ Ռուսաստանի հայոց լրագրութեան մէջ։

Ներկայ 1877 տարին, չը նայելով հազարաւոր արգելքների, մենք աջողութեամբ առաջ տարանք «Մշակի» շաբաթը երկու անգամ հրատարակելը։ Եթէ այդ փորձը մեզ աջողվեցաւ, մենք յոյս ունենք, որ ժողովրդի համակրութիւնը վայելելով, մեզ կաջողի և մեր լրագրի ամենօրեայ հրատարակութիւնը։

Ի հարկէ այդ տեսակ գործ թէ իր նորութեան կողմից և թէ զանազան դժուարութիւնների պատճառով հեշտ չէ իրագործել։ Բայց մենք յոյս ունենք որ տոկունութեամբ և օրինաւոր աշխատակիցների օգնութեամբ մենք կը յաղթենք բոլոր արգելքները։

Խմբագրական ամբողջ մեքենան սարքելու համար ժամանակ է հարկաւոր, այդ պատճառով մենք չենք կարծում որ եկող տարվայ «Մշակի» առաջին համարը կարողանանք յունվարի 15-ից վաղ հրատարակել։ Լաւ է քիչ ուշացնել, բայց հաստատ գործ բռնել և այնուհետև կանոնաւոր կերպով նորան առաջ տանել, քան թէ շտապել և անհաստատ քայլեր անել կամ տատանել....

Մի և նոյն ժամանակ պէտք է ասել որ հայերը միշտ սովորութիւն ունեն լրագրին ուշ գրվելու, ուրեմն մեզ հարկաւոր է ժամանակ, որպէս զի լաւ պատրաստվենք և քիչ թէ շատ ճշդութեամբ իմանանք որքան բաժանորդ կունենանք այս տարի, որպէս զի պատրաստութիւն տեսնենք թղթի վերաբերութեամբ։

Մենք այնու ամենայնիւ մեծ յոյս ունենք որ այս տարի մեր բաժանորդների թիւը շատ կաճի։

Ինչ որ վերաբերում է «Մշակի» ուղղութեանը, նա նոյնը կը մնայ իր հրատարակման եօթերորդ տարին, ինչ որ էր վեց տարի շարունակ։ Մենք հետևեցինք միշտ բուն ժողովրդական ուղղութեանը, միշտ աչքի առաջ ունէինք հայոց ժողովրդի շահերը և նրա ընդհանուր մարդկային տնտեսական, բարոյական և մտաւոր զարգացումը։

Իսկ այդ տեսակ ուղղութիւն մեզ աջողվեցաւ և կարող է աջողվել միմիայն ժողովրդի մարդիկների աշխատակցութեամբ։

Նոյնը կանենք և այսուհետև։ Նոր վարդապետութիւնը, նոր մտքերը կարելի է ըմբռնել տալ նոր մարդիկներին, թարմ ուղեղներին, և նրանց միջնորդութեամբ քարոզել այն մտքերը ժողովրդին։

Ինչ ուզում են ասեն, ինչքան կամենում են յարձակվեն «Մշակի» դէմ, բայց մի բան հերքել չեն կարող, որ «Մշակը» այնպիսի մտքեր է յայտնել միշտ, որ ամենքին նոր էին երևում և այդ նորութիւնը յարուցեց մեզ դէմ բազմաթիւ թշնամիներ։

Իսկ նոր մտքեր, կրկնում ենք, կարելի է ըմբռնել տալ նոր մարդիկներին, նրանց կարելի է յայտնել և քարոզել ժողովրդի մարդիկների՝ ձկնորսների միջնորդութեամբ։

Երիտասարդութիւնը որ յայտնի ուսում է ստացել, որ ունի ամեն մի մտքի, ամեն մի գաղափարի վրա արդէն կազմակերպված պաշտօնական գիտական հայեացքներ, — նա դժուարութեամբ է ընտելանում նոր, ինքնուրոյն մտքերի քարոզութեանը։ Փարիսեցիներին դժուար է ընդունել տալ նոր, գուցէ դեռ անտաշ, բայց կենդանի և կենսատու մտքերը։ Հին ձևերի մէջ դժուար է ձուլել նոր ձևերը....

Մենք մեր գործունէութեան մէջ միշտ կանգնել ենք և կը կանգնենք ժողովրդական հողի վրա, կը հիմնվենք ժողովրդական տարրի վրա, ուրեմն մեր գործը աջողութեամբ առաջ տանելու համար մեզ անհրաժեշտ հարկաւոր են թարմ, ժողովրդական մարդիկ, ժողովրդից դուրս եկած մարդիկ և ոչ թէ փարիսեցիներ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՇԵՐԱՊԱՀՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Դեկտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը Թիֆլիսի Դումայի նստում յարուցվեցաւ քաղաքիս արուեստաւորներից և մեշչաններից գիշերապահ խմբեր կազմելու խնդիրը, որոնք հերթով պէտք է վերահսկեն քաղաքիս կարգապահութեան մասին։ Քաղաքային Ուպրավա առաջարկեց վարձատրել մի յայտնի գումարով գիշերապահներին, բայց Դումայն վճռեց նշանակել նրանց մի գումար այն չափով որ բաւական լինէր նրանց հագուստի, զէնքերի և նշանների համար։ Ձայնաւորներից ոմանք մինչև անգամ աւելորդ էին համարում շնորհակալութիւն յայտնել արուեստաւորներին և մեշչաններին, վախենալով որ նոքա այդ շնորհակալութիւնը կընդունեն որպէս վարձատրութեան խոստմունք։

Մենք այդ տեսակ վճիռ անիրաւ ենք համարում։ Մենք կարծում ենք որ ինչպէս մեշչանները և արուեստաւորները այնպէս էլ մենք ամենքս հաւասարապէս ենթարկվում ենք վտանգին Թիֆլիսի փողոցներում կողոպտված և սպանված լինելու, ուրեմն ի՞նչ իրաւունքով մենք ինքներս մեզ կազատենք քաղաքիս փողոցներում հերթական կարգապահութիւն անելու դիտաւորութենից, ստիպելով կատարել այդ ծանր պարտաւորութիւնը մեր արուեստաւորների և մեշչանների դասերը։ Աշխատող դասերը ամբողջ օրը մեզանից աւելի են աշխատում, ի՞նչ պարտաւորութիւն ունեն նրանք այդքան ծանր աշխատանք կրելուց յետոյ, ամբողջ օր հացի կտորի համար քրտինք թափելուց յետոյ, դարձեալ մեզ համար գիշերները կարգապահութիւն անելու և մեզ պաշտպանելու աւազակներից, իսկ մենք հանգիստ նստենք մեր տաք սենեակներում....

Մեր կարծիքով կամ մենք ամենքս, քաղաքի բնակիչներս, առանց բացառութեան պէտք է գիշերապահութիւն անենք, կամ եթէ աղայութիւն ենք անում և ուրիշներին մեզ ծառայեցնում, գոնէ վճարենք նրանց մեզ համար կրած աշխատանքի համար։

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

12-ին Դեկտեմբերի

Խօսքս այս վերջի ժամանակը հնարած մեքենաների վրա պիտի լինի, որ համեմատելով իրանց գործածութեան հետ զարմացնում են մեզ իրանց հասարակ կազմվածքով։

Այս քանի օրս տեխնիկական պրոֆեսսոր պ. Վլադիմիրսկին կարդաց Պոլիտեխնիկական թանգարանում մի բեֆերատ Բէլլի հնարած Տելեֆոնի (հեռախօս, ձայն տանող մեքենայ) մասին, մի և նոյն ժամանակը ցոյց տալով նրա զօրութիւնը, և թէպէտ անաջողակ (պատճառը չը կարողացայ իմանալ), բայց այնու ամենայնիւ միւս տեղերում և մինչև անգամ նոյն իսկ պրոֆեսսորի փորձառութիւնները տեղւոյս Բազմարվեստեան ուսումնարանում տուին զարմանալի հետևանքներ։

Այդ մեքենան ունի կարճ դիտակի նմանութիւն և կազմված է մի կտոր սպիտակ երկաթի թիթեղից (ժեստից), մագնէտից և ճախարակից, որ պատած է առանձնացրած պղնձեայ թելով և այս բոլորը տեղաւորած է մէկ փայտէ ծրարում, որ ունի, ինչպէս և ասացի վերև, դիտակի նմանութիւն։ Եւ այսպէս երկու դիտակ միացնելով ապրեչումի առանձնացրած թելով, որ կարող է լինել 500 և աւելի վերստ հեռաւորութեան, մէկը դնում է դիտակներից մինը բերանին և սկսում է հեռախօսել միւսի հետ, որ կարող է գտնվել միւս քաղաքում։ Այժմ այդ մեքենան ստացվել է Մոսկվայում մեծ քանակութեամբ և վաճառվում է ջուխտը 10 և աւելի ռուբլիով, համեմատ մղոնի երկայնութեան։

Այդ մեքենայով կարելի է մարդի խօսքեր, երգեր, և այլ մուզիկական ձայներ հեռախօսել մի քաղաքից միւս քաղաք, մի աշխարհից միւս աշխարհ։

Երբ այդ մեքենայի զօրութեամբ խօսում էին Գաղիայից Անգլիա, այն ժամանակ մէկ գաղիացի

կին հարցրեց. «դիտէք ով եմ ես։» — «Ոչ, պատասխանեցին Անգլիայից, բայց առանց սխալ կարող ենք ասել որ դուք կին եք։»

Միւս մեքենան է ֆոնոգրաֆ, ձայն—գրող, կամ աւելի ուղիղ, ձայն կրկնող մեքենայ։ Դրա հնարողը Նիւ-Ղժէրսի քաղաքից Թոմաս Էդիսոնն է։ Դրա գործիքի կազմվածքը փոքր ինչ բաղադրեալ է քան տելեֆոնի։ Երբ խօսում կամ երգում են այն ժամանակ այդ մեքենայում բոլոր ձայները նշանվում են մի ժապաւէնի վրա, և հարկաւոր է միայն տեղափոխել ժապաւէնը մի թաղանթից (պերեպօնկայից) միւսը, որ դանվում են այդ իսկ մեքենայի մէջ, որ կրկնվեն նոյն իսկ ձայները, նոյն իսկ կարգով, եղանակով և յատկութիւններով։

Վերջապէս, ինչպէս իմանում ենք լրագիրներից պ. Բէլը հնարել է, նմանապէս և մի մեքենայ, որի զօրութեամբ կարելի է լինելով, օրինակի համար Թիֆլիսում, տեսնել ինչ է պատահում Էրզրում քաղաքում։ Բայց տարաբաղդաբար այս վերջինը չէ կատարելագործված և այդ պատճառաւ չենք խօսում մանրամասնաբար այդ մեքենայի մասին։ Իսկ երբ կատարելագործվի, կարելի է դուշակել այդ մեքենային մեծ ապագայ։

Լ. Խան-Աղեանց

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Դեկտեմբերի 18-ին

Պ. Խմբագիր։ Անցեալ նամակում մենք պարզ և չշափելի կերպով ցոյց էինք տուել, թէ որքան անհիմն, լոգիկայից զուրկ էին պ. Գրչի գրած նկատողութիւնները մեր «Բարեկամութեան Ջոհերա»-ի մասին։ Առանց հերքելու մեր ասածներից և ոչ մինը, նոյն Գրիչը այժմ հաւատացնում է թէ մեր «Փորձ»-ի մէջ տպված թարգմանութիւնները այն պատճառով էին ճիշդ և պարզ, որովհետև խմբագրութիւնը ուղղել էր նրանց։ Ուրեմն, պ. Գրիչն ուզում է ասել, թէ առանց «Փորձ»-ի խմբագրութեան մենք ոչ գրել կարող ենք և ոչ թարգմանել։ Չենք ուզում խլել նրանից այդ վերջին մխիթարութիւնը, բայց և չենք կարող լռութեամբ անցնել մի ուրիշ իրողութիւն, որ ապացոյց է թէ ինչ տեսակ է հասկանում «Փորձը» գրականական ազնուութիւնը։

Ամիս ու կէս առաջ մենք ուղարկել էինք «Փորձ»-ի խմբագրութեանը մի քաղուածք Վիկտոր Հիւգոյի վերջին չարագրութենից, որ կոչվում է «Histoire d'un crime» (Մի չարագործութեան պատմութիւն)։ «Փորձ»-ի վերջին համարը կարդալուց յետոյ, կամենալով բոլորովին կարել մեր յարաբերութիւնները նորա խմբագրութեան հետ, խնդրել էինք մեր բարեկամներից մինին յետ պահանջել յօդուածը և յանձնել «Մշակի» խմբագրութեանը։ Պ. Յովհաննիսեանցը պատասխանել է, թէ յօդուածն արդէն յետ է ուղարկել մեզ։ Որքան յայտնի է, ոչ մի խմբագրութիւն յետ չէ ուղարկում յօդուածները ուրիշ քաղաքներ, մինչև անգամ եթէ նոցա հեղինակները պահանջէին այդ։ Ուրեմն, ինչ պատճառով պ. Յովհաննիսեանցը պէտք է յետ ուղարկէր մեր յօդուածը, երբ ոչ ոք նրանից այդ չէր պահանջել։ Ակնկալում է մեկնել, որ յօդուածը խմբագրատանն է եղել, բայց պ. Յովհաննիսեանցը չէ կամեցել վերադարձնել այն։ Ամենալաւ ապացոյցը գորա այն է, որ մենք արդէն վաղուց ստացել ենք մեր բարեկամի նամակը այդ մասին, բայց պ. Յովհաննիսեանցի ուղարկած յօդուածը դեռ մեզ չէ հասել։ Թող ընթերցողը ինքը դատէ, թէ որքան ազնուութիւն կայ այդ տեսակ վարմունքի մէջ։

Ն. Լալայեանց

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Դեկտեմբերի 15-ին

Ամսոյս 13-ին վրդովվեցաւ բոլոր քաղաքը սարսափելի մի դիպուածով։ Այժմ բոլոր ժողովուրդը համարեա զբաղված է սրանով։ Այս դիպուածի մասին պատմում են հետևեալը։ Ամսոյս 6-ին իջեր է տեղիս «Դաղմարա» անուանեալ հիւրանոցում մէկ երիտասարդ՝ որ յայտներ է իրան ծառայութենից արձակված բոտմիստր բարոն Շտեմպել անունով։ Այս երիտասարդը մէկ օր հիւանդ ձևանալով՝ կը կանչէ իր մօտ հիւրանոցի ծառային և կը հարցնէ թէ «որոնք են տեղիս նշանաւոր բժշկները»։ Ծառան կը յիշէ 8 բժշկաց մականունները ի թիւս որոց և բժշկապետ պ. Կավալչուկովին։ Երիտասարդը կը հրամայէ հրաւիրել պ. Կավալչուկովին։ Բժշկապետը կը գայ, կը տեսնէ հիւանդին և կերթայ։ Ուրիշ մի օր երկրորդ անգամ կը գայ և դարձեալ կերթայ։ Իսկ երրորդ անգամ ամսոյս 10-ին այլ ևս չի վերադառնայ իր տուն։ Ամսոյս 11-ին պ. Կավալչուկովին՝ հարկաւորութիւն ունեցող անձինքը՝ կը փնտռեն ամեն տեղ և չեն գտնիր։ Կերթան տեղիս երկաթուղու վարչութիւնը իմանալու համար՝ պատճառ որ պ. Կավալչուկովը ծառայում էր երկաթուղիի վրա որպէս բժիշկ։ Երկաթուղիի վարչութիւնը կը հարցնէ հեռագրով բոլոր ճանապարհի վրա եղած կայարաններին և ոչ մի տեղ չը գտնվեցաւ։ Վերջապէս կը գտնեն առ պոլիցիան քաղաքիս։ Պոլիցիան փնտռեց ամբողջ երկու օր՝ ամսոյս 11-ին և 12-ին և չը գտաւ։ բայց երբ բժշկապետի ատն զրասեղանի վրա գտան մէկ կտոր թուղթ՝ որի վրա գրել էր բժշկապետը թէ գընում է «Դաղմարա» հիւրանոցի № 48 հիւանդի տեսութիւն, այն ժամանակ ամսոյս 13-ին դիմեցին այն հիւրանոցի նշանակեալ սենեակը։ № 48 սենեակը փակ էր և Շտեմպել երիտասարդը ամսոյս 10-ին դուրս գնալով քաղաքից մի քանի ժամանակաւ թողել էր իր վրա այդ № վճարելով սենեակի գինը օրական հաշուով։ Պոլիցիային կը հրամայէ բանալ, բայց բանալիքը գտան երիտասարդը իր հետ տարած լինելով՝ ստիպված էր ուժով բանալ և ներս մտնել։ Դուռը բանալուն պէս ներկայանում է սարսափելի տեսարան։ դիակը պ. Կավալչուկովի սեղանի մօտ գլուխը կացնի հարուածով կէս արած (շինքից սկսած մինչև քիթը), զրասեղանի վրա արիւնօտ կացինը, բժշկապետի սկսած դեղատոմսակը (рецептъ) և մի կտոր թղթի վրա գրած՝ թէ սպանեցի իր շահասիրութեան և կաշառակերութեան պատճառաւ։ Նոյն սենեակի մէջ գտան և երիտասարդի պատկանեալ իրեղէններն ինչպէս չէմոդանն, լուացքն, վիզիտի տոմսակներն և այս բոլորի վրա երիտասարդի անունը և մականունը նշանակած դեղեցիկ տառերով և թաղով։ Բժշկապետի գրպանում գտան 66 ռուբլի և ոսկեղէն իրեղէններ՝ որ միշտ կրում էր իր հետ։ տարած էր միայն ոսկեայ ժամացոյցը։ Սենեակի մէջ անտանելի հոտ էր կանգնած երեքօրեայ դիակից։ Հիւրանոցի տէրը և ծառայքը պատմում են՝ որ երիտասարդը իջեր էր նախ ուրիշ սենեակում, բայց այն սենեակը չը հաւանելով տեղափոխվեցաւ այս սենեակը։ Այս սենեակում ևս տեսան փոփոխութիւն։ զրասեղանի դէմ պատի վրա կախած էր հայելի և զրասեղանի առջև նստողն հայելի մէջ տեսնում էր իր եռևի և երկու կողմի բոլոր բաց տարածութիւնը։ իսկ այժմ հայելին երիտասարդը կախած է բոլորովին առանձին, ուրիշ կողմ՝ այնպէս որ զրասեղանի առջև նստողն ոչինչ շարժմունք եռևից չի կարող նկատել։

Նոյն օրը, դեկտեմբերի 13-ին, զննեցին բժիշկներն և դատաքննիչն (слѣдователь) և տուին իրաւունք թաղելու դիակը՝ որի թաղումն և կատարվեցաւ մեծ հանդիսով ամսոյս 15-ն առաջին բաղմութեան ներկայութեամբ։

Ինչպէս պատմում են այս արիւնհեղութիւնը պիտի լինի պատահած ամսոյս 10-ին օրվայ ժամի 1-ից մինչև 3-ը՝ պատճառ որ բժշկապետը եկած էր հիւրանոցի սենեակը մօտ ժամի 1-ին և մօտ ժամի 3-ին օրվայ երիտասարդը դուրս է գնացած հիւրանոցից։ Ահա ժամանակ, ցերեկով քաղաքի նշանաւոր բժիշկ մարդուն սպանում են սենեակի մէջ կացնի մի հարուածով որպէս մի ճանճ՝ այնպէս որ ոչ ոք ոչինչ չի իմանում անգամ ատն մէջ լի բնակիչներով։

Պ. Կավալչուկովը էր բաւականին հմուտ բժիշկ, ընտանեաց տէր, ունէր և մեծ կարողութիւն, պատիւ ամեն տեղ և ձայն։ տէրութեան ծառայութեան մէջ հասած էր մինչև ստատսկի սովետնիկի աստիճանը և արժանացած էր զանազան պարգևների։ Ինքը բարի մարդ ըլլալով չատերին հասցնում էր ամեն տեսակ օգնութիւն ձրիաբար։

Գործի քննութիւնն սկսված է և ամեն հնարքները գործ են դրվում որ գտնեն սպանող երիտասարդին։ Ցայտնի է արդէն՝ որ կացինն գընած է տեղիս ամենալաւ կրպակի մէջ և վճարած է երեք ռուբլի։ Պատմում են ևս՝ որ երիտասարդի անունը, մականունը և բոլոր իրեղէններն իր մականուան նշաններով՝ չինծու են և երիտասարդ անձը եղել է այս գործում վարձած, ուրեմն և կամակատար ուրիշ անձի մի։ Այստեղ երևում է վրէժխնդրութիւն՝ որտեղ մասնակից է և չահասիրութիւն։ Գործի դատաստանական կողմից քննվելուց յետոյ միայն կարելի է հաղորդել ստոյգն մանրամասնաբար։

Ա. Մելքումեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Եկող 1878 թուից որովհետև «Մշակ» լրագիրը հրատարակելու ենք ամեն օր, մենք կունենանք մեր լրագրում մեր սեփական հեռագիրները։

—

Այս ամեռը դիտաւորութիւն կայ ԹԻՖԼԻՍԻ արուեստաւորների ընկերութեան դահլիճում հրապարակական դասախօսութիւններ կարդալ զանազան առարկաներից հայերէն և ռուսերէն լեզուով։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են որ այդ քաղաքի հայ-հոգևորականաց ընթերցարանի անդամները դեկտեմբերի 12-ին ունեցած ժողովում որոշեցին առաջիկայ տարին ստանալ հետևեալ լրագիրները և ամսագիրները՝ «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Հայկական Աշխարհ», «Արարատ», «Всемірная Иллюстрація», «Голосъ», «Тифлс. Вѣстн.» և «Дѣло»։ Վճռեցին նոյնպէս բերել տալ զանազան հայոց գրքեր։ Դրա համար քահանաները, որոնք ընթերցարանի անդամներ են, հաւաքեցին իրանց մէջ մի յայտնի գումար, որպէս զի լրագիրներ և գրքեր բերելու ծախսը ծածկեն։

—

«Մշակի» ներկայ համարը կը լինի այս տարվայ վերջին համար։ Նոր տարուց «Մշակը» որ ամեն օր պէտք է հրատարակվի կարժենայ տարեկան 10 ռուբլ, իսկ կէս տարվան 6 ռուբլ։ Առաջին համարը յունվարի 15-ից վաղ անկարող կը լինենք հրատարակելու, մանաւանդ որ հայերը առհասարակ ուշ են գրվում։

—

Նոր տարուց դիտաւորութիւն կայ ԹԻՖԼԻՍՈՒՄ մի նոր ռուսաց թերթ հրատարակելու «Тифлисскія Объявленія» վերնագրով։ Դա կը լինի ուրեմն յայտարարութիւնների թերթ։

—

Վերջին օրերը ցուրտը ԹԻՖԼԻՍՈՒՄ դարձեալ սաստկացել է։ Ասում են որ մեր քաղաքում տարածված են զանազան հիւանդութիւններ, մանաւանդ տիֆ անուանված սարսափելի ցաւը։

—

ԹԻՖԼԻՍԻ բնակիչների մի քանի շրջաններում միտք է ծնվել կազմել քաղաքիս բնակիչներից գիշերապահ խմբեր։ Առաջարկում են որ իւրաքանչիւր բնակիչ հերթով պատէր գիշերները քաղաքիս այս կամ այն թաղում գիշերապահ զինուորների հետ միասին։ Ի հարկէ եթէ այդ բանը ազողվէր, բոլոր բնակիչներն էլ պէտք է հաւասարութեամբ կրէին այդ ծառայութիւնը և խտրութիւն չը պէտք է լինէր հարուստի և աղքատի մէջ։

—

Դեկտեմբերի 26-ին ԹԻՖԼԻՍԻ Դումայի նիստում ձայնաւոր պ. Էլիմիրզով առաջարկեց հրատարակել «Քաղաքային Համբաւներ» (Городскія Извѣстія) վերնագրով մի քաղաքային թերթ ռուսաց լեզուով, որտեղ կը զետեղվէին Դումայի նստերի հաշիւները, պրոտոկոլները, կոնտրակտները և այլն։ Դուման այդ հարցի վրա երկար վիճաբանելուց յետոյ, վճռեց տարաժամ համարել պ. Էլիմիրզովի առաջարկութիւնը և ձայների բազմութեամբ մերժեց նրան։ Զայնաւոր Գրիգոր Արծրունի առաջարկեց մի յայտնի գումար նշանակել որպէս օժանդակութիւն տեղական ռուս լրագիրներից մինին, քաղաքին հարկաւոր լուրեր և քաղաքային Դումայից տեղեկութիւններ որպէս յաւելուած ռուսաց լրագիրներից մինի հետ հրատարակելու համար։ Այդ առաջարկութիւնը յիշեալ նստում չը վիճաբանվեցաւ և երևի քննութեան տակ կը դցվի Դումայի հետեւեալ նստում։

—

Դեկտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը, ԹԻՖԼԻՍԻ Դումայի ձայնաւորների ժողովը նախագահում էր քաղաքագլուխ պ. Կիպիանու տեղ քաղաքային վարչութեան աւագ անդամ պ. Դօլուխանով։ Այդ նստի մէջ կանդիտատ պ. Գրիգոր Շանշիեվ երդում տուեց հայերէն լեզուով ձայնաւորի պաշտօնը ընդունելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Ներքին գործերի նոր մինիստրը ինչպէս երևում է դիտաւորութիւն չունէ շրջաբերական ուղարկելու պրեֆեկտներին, որի մէջ բացատրված կը լինի նրա հայեացքը ընդհանուր պօլիտիկայի վրա։ Նա միայն այս գործի վերաբերութեամբ բերանացի պատուէրներ տուեց, և եթէ «Հավասի թղթակցութիւններին» հաւատանք հետևեալ է։ «Ձեր գործը պարտներ, ասաց նրանց մինիստրը,— ոչ թէ կուլի գործ պէտք է լինի, այլ վերանորոգութեան։ Հանրապետութիւնը Ֆրանսիայի օրինաւոր կառավարութիւն է և այն բոլորը ինչ որ նրան հակառակ է, օրինաց դէմ է։ Դուք պէտք է ճշմարտութեան պաշտպաններ լինէք ձեր նահանգների մէջ։ Պէտք է լինէք հաստատ, բայց չափաւոր։ Ձեզանից շատերը տեղերից զրկվեցան մայիսի 16-ի կառավարութեան ժամանակ, բայց այժմ ամեն բան նախկին կարգով է գնում։ Ձեզ կը բերկին նշանակելը ձեր տեղերի վրա հասարակական կարծիքը, բոլոր անկանոնութիւնների ուղղելու սկիզբը կը համարէ։ Մենք ցանկանում ենք որ այս այսպէս լինի և կամենում ենք որ ժողովրդի կամքը, որ այնպէս բարձր յայտնվեց հոկտեմբերի 14-ին, կատարեալ բաւականութիւն ստանայ։ Մի քանի օրից յետոյ մենք ձեզ կը տանք լաւ, պատուաւոր և հանրապետական օգնականներ, որոնք կօգնեն ձեզ ամեն տեղ կարգ և ազատութիւն վերականգնելու համար։ Ձեր նախորդները լրագիրներ ծախելու ազատութիւն չէին տալի, բայց դուք պէտք է աշխատէք հեռացնել այդ արգելքները։ Շատ քաղաքագլուխներ զրկվեցան իրանց տեղերից, դուք պէտք է իրանց նախկին տեղերը նշանակէք նրանց, որոնք զրկվել են իրանց հանրապետական համոզմունքների պատճառով։ Ձեր պարտաւորութիւնն է ուղղել այն բոլորը, ինչ որ մայիսի 16-ի կառավարութիւնն է գործել, պէտք է վարձատրել նրանց, որոնք նիւթապէս վնաս են կրել, պէտք է աշխատէք բաց անել այն սրճանոցներ և հիւրանոցներ որ փակվեցան իրանց հանրապետական համոզմունքների համար, մի խօսքով դուք պէտք է հասարակապետութեան ճշմարիտ ներկայացուցիչներ լինէք։ Շատ համբերող և հաստատ կամք ունեցող հանրապետական Ֆրանսիան պէտք է վերջապէս իր զրկանքների փոխարէն, երկու տեսակ պտուղ ստանայ, աշխատանք և ազատութիւն։

ԹՒՒՐՔԻԱ

—

Ծաձկաստանի հայերը չեն կամենում զինուորական ծառայութեան մէջ մտնել։ Նոյեմբերի 27-ին կայացաւ հայոց խորհրդի ընդհանուր ժողով, քրիստոնեաներից քաղաքային զօրք կազմելու խնդիրը քննելու համար։ Կառավարութեան հրամանը կարդալուց յետոյ մի քանի մարդիկ ճառեր խօսեցին, որով ապացուցանում էին քաղաքային զօրք մտնելու անհրաժեշտութիւնը, որովհետև այդ միջոցը միայն կարող է հաւասարութիւն գցել սուլթանի հպատակների մէջ։ Ժողովը հանդիսաւոր տեսարան էր ներկայացնում, բոլոր պատգամաւորները թուով 120 մարդիկ էին. նախագահում էր Ներսէս պարիարքը, իսկ ամբոխի թիւը հասնում էր 5000 մարդու։ Ժողովը միաձայն որոշեց շնորհակալութիւն յայտնել կառավարութեանը այս կարգադրութեան համար և այս բանը իրագործելու համար որոշեց խառը մանաժողով կազմել հոգևորականներից և աշխարհականներից։ Բոլոր վերոյիշեալ տեղեկութիւնները քաղում ենք պաշտօնական զեկուցումից։ Հայերը սաստիկ գրգռված դրութեան մէջն են գտնվում, բայց մամուլի ազատութիւն չունենալով չեն համարձակվում ճշմարտութիւնը վերականգնել։ Ահա իսկապէս թէ ինչպէս կայացաւ խորհուրդը։ Նա կայացաւ փակված դռներով. այս պատճառով ներկայ էին 6000 մարդ և եթէ այս պատճառը չը լիներ Կ. Պոլսի 200,000 հայերից գոնէ 20,000 մարդ ներկայ կը

գանվէր։ Ներկայ գանվողների մէջ կային հասարակութեան ամեն դասակարգի ներկայացուցիչներ. հոգևորականներ, վաճառականներ, արհեստաւորներ և մինչև անգամ տուտումբաջիներ (հրդեհ հանգցնողներ). սրանք բոլորը շատ ոգևորված էին և պատրաստ էին ընդիմութիւն ցոյց տալ կառավարութեան։ Նախագահ ընտրվեցաւ պետական խորհրդական Նուբեան-էֆէնդին, որ խառը ժողովի նախագահ է, և որի 120 անդամները 20 անդամներով հոգևորականներից, որոնք միացել էին սրանց հետ, ներկայ էին։ Բայց որովհետև այս ժողովը ազգային ժողովի կերպարանք ունէր, ուրեմն պատրիարքը որպէս բոլոր ազգի հոգևոր և քաղաքական գլուխ, ընտրվեցաւ պատուաւոր նախագահ։ Վիճաբանութիւնների ձևի հետ ծանօթանալու համար, պէտք է յիշել որ հայերը 1860 թուին ստացան կատարեալ սահմանադրութիւն, որը սուլթանը հաստատեց։ Այս սահմանադրութեան հիման վրա հայերը ունեն ելևմուտքի ժողով որի պարտաւորութիւնն է հսկել պատրիարքարան մտած եկամուտի վրա և որոշել ծախսեր եկեղեցական պահանջների, ուսումնարանների և Բ. Դրան հարկ ներկայացնելու համար (բեդել տուսլերիա)։ Ճառախօսներից մէկը նկատեց որ հայոց խորհուրդը ամբողջ 25 տարվայ ընթացքում խնդրում էր կառավարութենից զինուորական ծառայութիւն մտցնել հայերի մէջ, մանաւանդ որ նրանց ներգաղթում էին քուրդերը Ասիայում։ Նրա խօսքը ընդմիջեց կառավարութեան մէկ ատիճանաւոր. «Այժմ խօսքը քուրդերի մասին չէ, բացականչեց նա, այլ ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան վրա է». Մէկ քահանայ ասաց. «Ինչ իրաւունքով հայերին կամենում են ստիպել որ նրանք զինուորական ծառայութիւն մտնեն,— կառավարութեան և ժողովրդի մէջ եղած սիրոյ զգացմունքից։ Երբէք։ Դնելով մեզ վրա ամենասուրբ և ամենածանր պարտաւորութիւններից մէկը—արիւն թափել կառավարութեան համար—մեզ մինչև այժմ չը տուեցին ամենարնական իրաւունքը այն է քրիստոնեայ մարդու վկայութեան հաւասարութիւնը դատաստանի առաջ։» Այս խօսքերից յետոյ նրան ծափահարեցին։ Նախագահը իզուր աշխատում էր հանգստութիւնը վերականգնել, կառավարութեան կուսակցութեան անդամներից մի քանիսը փորձեցին խօսել, բայց ամբոխը աղաղակում էր. «Մենք զինուորներ չենք և երբէք չենք լինի». առաջին կարգում գանվող հրդեհաշէջները արդէն կամենում էին յարձակվել նրանց վրա, բայց ուժով նրանց հանգստացրին։ Մատթէոս Իզմիրլեան անունով քահանան շարունակում էր. «Ես գովելու արժանի չեմ, ես կատարում եմ միայն իմ պարտաւորութիւնը։ Կեանքի և մահվան խնդիր է, սրա համար մեզ ժամանակ է հարկաւոր որ այդ բանի վրա մտածենք և պայմանները որոշենք, որով մենք կարող կը լինենք համաձայնել այդ առաջարկութեան հետ։ Ժողովի մէջ կառավարութեան կուսակցութենից մի քանիսը յայտնեցին որ այդ առաջարկութիւնը «մէկ առանձին ողորմութեան նշան է»։ Այս խօսքերի դէմ շատերը խօսեցին ասելով որ զինուորագրութիւնը բոլորովին առանձին ողորմութեան և առանձին իրաւունք տալու նշան չէ, իսկ պատերազմից յետոյ կը զրկեն մեզ այդ իրաւունքից թողնելով նախկին անհաւասար դրութեան մէջ։ Բոլոր այս ընդիմադրութիւնների հետ միացաւ և այն բանը որ ընդհանուր հարկը զինուորական ծառայութենից ազատվելու համար արդէն վճարած է մինչև 1878 թուի մարտի մէկը։ Պարլամենտի առաջին նիստում մէկ յոյն պատգամաւոր առաջարկեց մերժել այս յօդուածը որպէս սահմանադրութեան հակառակ։ Բայց մուսուլմանները հակառակ խօսեցին այս առաջարկութեան դէմ պատճառ բերելով որ երիտասարդները դեռ ևս զինուորական արհեստին սովոր չեն։ Այս պատճառով հայերը կառավարութեան այս առաջարկութիւնը ուրիշ կերպ են մեկնում, նրանք վախենում են նրանից որ կառավարութիւնը նպատակ ունէ դիմամբ Կ. Պոլսի հայերին պատերազմ ուղարկել, որ կոտորվեն նրանք և որ այդ թեթև միջոցով կամենում են թիւրքերը ազատվել հայերից։ Հայոց պատրիարքարանում կայացած խորհուրդը վերջացաւ 4 և կէս ժամին։ Պատրիարքը յայտնեց որ սկզբունքով զինուորական ծառայութեան խնդիրը ընդունված է։

ԱՆԳԼԻԱ

—

Ներկայ պատերազմի սկիզբէն մինչև այսօր Անգլիան մի տարտամ և անորոշ քաղաքականութիւն է ցոյց տալի։ Կ. Պոլսի մէջ կոնֆերէնցիայի գումարուած ժամանակ անգամ Անգլիայի երկու ներկայացուցիչներն, Լորտ Սալիսպիւրի և Հէնրի Էլիօտ, մի քանի կէտերի մէջ իրարի անհամաձայն երևեցան։

Վերջին լուրերին նայելով, անգլիական մինիստրները որոց մէջ մեծ անհամաձայնութիւն երևում էր արևելեան խնդրին նկատմամբ, համաձայնվել են խորհուրդի հրաւիրել պարլամենտին իւր ժամանակին յառաջ։ Թէ այդ որոշում ինչ նպատակ ունէ, չէ կարելի այժմէն որոշել. միայն սա յայտնի երևում է թէ մինիստրները շատ կրիտիկական են համարում այս բոպէն և ստիպուել են պարլամենտի խորհուրդին դիմել։

Արդեօք Անգլիան զէնքով կը միջամտէ՞ արևելեան խնդրին, թէ իւր սեփական շահեր պաշտպանելու համար սպառնալիքներով միայն գոհ եղած, դիպլոմատիական շրջանէն չը դուրս գայ։ Այդ հարց չէ կարելի շուտով վճռել. բայց ի նկատի ունելով Անգլիայի ներկայ դրութիւնն և հանգամանքներն, վերջինն աւելի հաւանական է երևում քան թէ առաջինն։ Թէև անգլիական մինիստրներն իւրեանց անորոշ քաղաքականութիւնով քիչ թէ շատ յուսադրեցին և քաջալերեցին Թուրք կառավարութեան, բայց Անգլիայի ժողովուրդն և նոցա ներկայացուցիչ եղող պարլամենտի անդամներն շատեր արձագանք տուին Գլադստոնի ձայնին և հէնց պատերազմի սկզբին ստիպեցին անգլիական կառավարութիւնն չեզոքութիւն պահել ռուս Թուրքական պատերազմին մէջ։ Ի՞նչ նոր բան պատահած է այժմ որ ստիպէ Անգլիային զէնքի դիմել։ Պլէվնայի և Ղարսի առնուիլը Անգլիայի շահերին մի նոր և չը նախատեսուած վնաս չէն բերում, բայց խաղաղութիւնը կը փութացնեն և Անգլիան այս պարագայի մէջ կարող կը լինի խաղաղական խորհուրդներ ընդունել տալ Բ. Դրան, ռուսական բանակն Բոսֆորի ափերին դեռ չը մօտեցած։

Անշուշտ Գլադստոնի ազատական կուսակցութիւնն պարլամենտի առաջիկայ նիստերին մէջ ամեն միջոց գործ կը դնէ որ չը վերանորոգուի 1854 թուականն որ Անգլիայի համար այնչափ արիւնհեղութեան, ծախքերի և վնասների պատճառ դառաւ, բայց այսօր յայտնի երևում է որ Թուրքիային բարեկարգութիւններ յուսալով խաբուած է եղել։ Իսկ տորիների պահպանողական և հնամոլ կուսակցութիւնն որից կազմուած է մինիստրութիւնն, կը յաջողի՞ արդեօք 54-ի քաղաքականութիւնն ընդունել տալ անգլիական ազգին, քանի որ կղերականութիւնն էլ հեռացած է իրանից այս պարագայի մէջ։ Անգլիայի մէջ ամեն կարգի հոգևորականներ ոգևորուած են Թուրք կառավարութեան դէմ, մահմետականների լուծին տակ քրիստոնեայների կրած անտանելի հարստահարութիւններն լսելով։ Թուրքիայի գրեթէ ամեն կողմը ցրուած ամերիկացի և անգլիացի միսիոնարներն՝ քրիստոնեայների կրած հարստահարութիւններին վրա անդադար տեղեկագիրներ են գրում և ուղարկում Լոնդոն աւետարանական ընկերութիւններին, որոց հետ յարաբերութիւններ ունեն։

Չը պէտք է մոռանալ որ երեք տարիի չափ յառաջ Անգլիայի ամենէն մեծ աւետարանական ընկերութեան կողմէն Կ. Պոլիս մի պատգամաւորութիւն եկաւ որ կազմուած էր լորդերէ և պարլամենտի մէջ երեսփոխանական պաշտօն ունեցող բարձրաստիճան անձերէ։ Այդ պատգամաւորութիւնը անգլիական դեսպանին միջոցով ցանկութիւն յայտնեց ներկայանալ Սուլթանին և ընկերութեան կողմէն յատկապէս խնդրել որ քրիստոնէական կրօնի քարոզութիւնն ազատ լինի Թուրքիայի մէջ և միսիոնարներն և քրիստոնեայներն պաշտպանուին մահմետականների մոլեռանդութենէն։ Մեծ եպարքոսն մերժեց նոցա և չը թողուց ներկայանալ Սուլթանին որոյ դէմ մի սպառնական բողոք հրատարակելով Կ. Պոլսի լրագիրներին մէջ, վերադարձան Լոնդոն։ Անգլիայի հոգևորականներն անտիքրիստոնէական են համարում հրէայ լորդ Բիկոնսֆիլդի քաղաքականութիւնն և այդ դաղափարներով ոգևորում են ժողովուրդն։

Չը պէտք է մոռանալ նաև որ Կ. Պոլսի մէջ հրատարակվող միակ անգլիական լրագիրն «Levant Herald» թէև հակառուսական, անդադար հրատարակում է քրիստոնեայներին գաւառների մէջ մահմետականներէն կրած հարստահարութիւններն և քննադատական յօդուածներով դատապարտում է Թուրք կառավարութիւն որոյ համար մի քանի անգամ արգելուած է։ Նոյնպէս և Աւետաբեր անուն լրագիրն զոր միսիոնարների ընկերութիւնն կը հրատարակէ Կ. Պոլսի մէջ հայերէն, Թուրքերէն և բուլգարերէն լեզուներով, «Levant Herald»-ի ուղղութեամբ կը շարժի։

Ի նկատի ունելով Անգլիայի հասարակական կարծիքն և միանգամայն սա կէտն թէ Անգլիան իւր սեփական շահեր պաշտպանելի համար կարող է առանձին համաձայնուիլ Ռուսիայի հետ և ստիպուած չէ անշուշտ միջամտել պատերազմի, ի նկատի ունելով այն ներքին խռովութիւններ որք գուցէ ծագին Անգլիայի մէջ պատերազմի հրատարակութեան պատճառով և այն վտանգ որ կը սպառնայ Իրլանդիայի կողմից, շատ հաւանական չէ երևում որ Անգլիան զէնքով միջամտէ արևելեան խնդրին, եթէ գոնէ Ֆրանսիան և կամ այս խնդրին մէջ շահ ունեցող ուրիշ պետութիւններ չը միանան իւր հետ։

Անգլիան ի՞նչ հաստատ յոյս կարող է ունենալ մահմետական Թուրքիայի ազնուութեան վրա որոյ համար իւր որդիների թանգագին արիւնը թափեց 1854-ին և 55-ին, աշխատեցաւ, որչափ կարելի էր, Թուրքիայի նպաստաւոր դաշնադրութիւններ կապել 1856 թուին, իսկ յետագայ 57 թուին մահմետականութիւնն զէնք բարձրացրեց իւր դէմ Հնդկաստանի մէջ։

Մօտ ժամանակ երբ պարլամենտն հաւաքուի, Անգլիայի քաղաքականութիւնն քիչ թէ շատ կը պարզուի անշուշտ և այն ժամանակ առիթ կունենանք աւելի որոշ կերպով գրել նոցա վրա։ Հետաքրքրական է տեսնել թէ թագուհին պարլամենտի բացման ճառին մէջ ինչ քաղաքականութիւն կը ցոյց տայ արդեօք և թէ կը յաջողի՞ Վիկտորիային Վիգ և Տորի կուսակցութիւններն միացնել այս արևելեան խնդրի մէջ։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Փարիզ, 13|25-ին դեկտ.

Ամսոյս 11|23-ին, կիրակի օր, Փարիզի այն թաղերում, ուր է Պէր-Լաշէզ գերեզմանատունը, կատարվեցաւ մի սրտաշարժ հանդէս։

Կէսօրին, թէև եղանակը շատ վատ էր, Բատիլ անունով ընդարձակ հրապարակը լի էր խուռն բազմութենով. 500 չափ ուսանողներ իրաւաբանութեան հաւաքված էին այդտեղ։ Նրանք որոշել էին գնալ և դնել հանգուցեալ Թիերի գերեզմանի վրա մի պսակ իբրև նշան իրանց խորին յարգանաց առ նորա յիշատակը։

Բոլոր ուսանողները շարվեցան զոյգ զոյգ և բացվեցաւ հանդէսը։ Ամենից առաջ գնում էին երկու ուսանող մի մի ձեռքով բռնած ունենալով մի փոքր քառակուսի պղնձի սև տախտակ, որի վրա գրած էր ոսկեզօծ տառերով այսպէս—«Պ. Թիէրին՝ հայրենիքի ազատողին և ֆրանսիական հասարակապետութեան առաջին նախագահին՝ իրաւաբանութեան ուսանողներ։» Յետոյ գնում էին վեց ուսանող տանելով ուսերի վրա մի սև փայտեայ պատուանդան, որի վրա դրած էր մի խիստ մեծ պսակ հրաշալի կերպով հիւսած դեղին անթառամ, կամ ինչպէս ֆրանսերէն ասում են՝ անմահ ծաղիկներից և օձաձև փաթաթած սև բարակ ժապաւէնով։ Պսակից յետոյ գնում էին ուսանողները՝ գլուխը կոր, տխուր դէմքով, կուրծքին մի մի փոքրիկ փունջ նոյն անթառամ ծաղկից, խուռն բազմութիւն ժողովրդի՝ մարդիկ, կանայք, մանկունք, ուղեկցում էին նոցա։ Այս տխուր հանդէսը այնպէս պատկառելի էր, որ ճանապարհին բոլոր անց ու դարձ անողները կանգնում էին և խորին զգացմունքով հանում էին իրանց գլխարկները. իսկ տների պատուհանները լի էին հանդիսասէր կանայքով։

Հասնելով գերեզմանատուն և մօտենալով Թիէրի գերեզմանին՝ ամենքը բացին գլուխները. երկու ուսանող չոքեցան գետնի վրա և խորին պատկառանքով դրին գերեզմանի վրա յիշեալ տախտակը և պսակը. տիրում էր մի վսեմ լռութիւն։ Ապա ուսանողներից մէկը ասաց մի համառօտ, բայց խիստ սրտառուչ ճառ, մերձաւորապէս այս խօսքերով.

«Սիրելի ընկերներ. այն օրը, երբ մեր մայրաքաղաքը տրտում և չքեղ կերպով կատարում էր պարոն Թիէրի թաղման հանդէսը, մենք ցրված էինք մեր գաւառներում ամառային արձակուրդների պատճառով։ Այժմ, մենք վերադարձած ժողովված ենք կրկին մեր մայրաքաղաքում, միթէ կարող էինք չը գալ և չը կատարել մեր բարոյական պարտաւորութիւնը, այն է՝ գալ այս գերեզմանի մօտ և դրանով յայտնել մեր մասնակցութիւնը ընդհանուր ազգային տրտմութեան։ Պ. Թիէրի բազմատեսակ ծառայութիւնները մեր սիրելի հայրենիքին այնչափ մեծ են և այնպէս յայտնի ամենքին, որ ես անտեղի եմ համարում մի առ մի թուել նրանց այստեղ։ Մենք, երիտասարդներս, Ֆրանսիայի նոր սերունդս, ինչպէս կարող ենք աւելի երախտագէտ լինել Թիէրի նման ազգային հերոսներին՝ եթէ ոչ հետևելով նոցա օրինակին։ Իսկ այս բոպէիս ֆրանսիական հասարակապետութեան առաջին նախագահի գերեզմանի վրա, ինչ կարող ենք ասել և ցանկալ, եթէ ոչ գոչել—կեցցէ՛ հասարակապետութիւն»։

Այս ճառի ամեն մի նախադասութիւնը ծածկված էր ջերմագին ծափահարութիւններով. իսկ վերջին խօսքից յետոյ ոչ միայն ուսանողները, այլ և ամբողջ բազմութիւնը գոչեց և բազմիցս կրկնեց—կեցցէ՛ հասարակապետութիւն։

Յետոյ մի ուրիշ ուսանող յայտնեց ընկերներին թէ՝ նոյն հանդէսը կազմակերպող մասնաժողովը պէտք է իսկոյն ներկայացնէ Տիկին Թիէրին հետևեալ ուղերձը։

«Տիկին, սորա տակ ստորագրված ուսանողները իրաւաբանութեան, ցրված լինելով ձեր հռչակաւոր ամուսնու մահվան ժամանակ, գալիս են այսօր յայտնել ձեզ այն մասնակցութիւնը, որը ընդունում են նրանք ձեր մասնաւոր և ընդհանուր ազգային սգաւորութեան մէջ։ Նա, որը նրանք ողբում են ձեզ հետ միասին, էր անշուշտ մեծ պատմաբան և մեծ մարդ պետական, բայց նա էր մանաւանդ մեծ քաղաքացի և քաջ պաշտպան հայրենեաց տարաբախտութեան ժամանակ, փառաւոր հիմնադիր ֆրանսիական հասարակապետութեան։

«Նրանք մատուցանում են ձեզ տիկին. իրանց խորին տրտմութեան և պատկառելի համակրութեան զգացմունքները։»

Կրկին թնդացին խրախուսանքներ և ծափահարութիւններ։

Վերջապէս՝ առաջին ճառախօսը յայտնեց իր ընկերներին մասնաժողովի չնորհակալութիւնը իրանց համակրութեան համար հանդիսին. մանաւանդ այնպիսի վատ եղանակին, և հրաւիրեց նրանց հեռանալ հանդարտութեամբ։

Այնուհետև բոլոր ուսանողները մօտեցան Թիէրի գերեզմանին և գլխաբաց ձգեցին նրա վրա իրանց կուրծքի փունջերը։

Այս սրտաշարժ և բազմամարդ հանդէսը կատարվեցաւ մեծ պարկեշտութեամբ և հանդար-

դութեամբ և ոստիկանութիւնը (պոլիցիան) ամենևին չը խառնվեցաւ գործի մէջ։

Պէտք է ասել որ այս հանդէսը առաջինը չէր. օգոստոսից սկսած, այն օրից երբ Թիէրը թաղվեցաւ, ոչ մի կիրակի չէ անցնում առանց այդպիսի հանդիսի. զանազան ուսումնարանների աշակերտները, գիտական ընկերութիւնները, արուեստաւորները, գործարանների տէրերը, և այլն, մինչև անգամ ուրիշ քաղաքներից և գաւառներից գալով, կատարում են այդպիսի հանդէսներ, և հանգուցեալ փոքրիկ քարաշէն մատուռը այժմ բոլորովին ծածկած է ներսից և դրսից բազմաթիւ պսակներով և ծաղիկներով։

Երանի՛ քեզ, Թիէր, որ կարողացար այդպէս արժանապէս ծառայել ազգիդ և հայրենիքիդ։

Երանի՛ քեզ, Ֆրանսիա, որ կարողանում ես առաջ բերել Թիէրի պէս զաւակներ և արժանապէս գնահատել նրանց ծառայութիւնները։

Պէր-Լաչէզի հանգստարանը գործեց իմ վրա խիստ տխուր տպաւորութիւն նաև ուրիշ պատճառով։ Այստեղ թաղվեցաւ այս տարի յունիսին հանգուցեալ Սարգիս վարդապետ Թէոդորեանը։ Ինչպէս յայտնի է, այս 97 տարեկան ծերունին իր բոլոր կեանքը նուիրած էր ազգին. բայց ահա նրա գերեզմանը մի ողբալի դրութեան մէջ, առանց մատրան, առանց պատնաքարի, միայն մի սև փայտեայ խաչով զարդարած է. յիրաւի սև խաչն էր նրա վիճակը։

Արդեօք չէ՞ կարելի մի ստորագրութիւն բանալ նրա մարմինը էջմիածին տեղափոխելու, կամ նրա գերեզմանի վրա մի արձան կանգնեցնելու համար։

* * *

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից հեռագրում են դեկտեմբերի 17-ին (29-ին), որ կիրակի յունաց պատրիարքի կոնդակը կարդացվեցաւ քրիստոնեաների զինուորագրութեան մասին, որի դէմ բոլոր յոյն ազգը բողոքեց։ Մի քանի եկեղեցիներում այդ կոնդակները պատռեցին։ Հայերը շարունակում են պատերազմական ծառայութենից հրաժարվել։ Լուրեր են տարածված որ իբր թէ Մուխթար-փաշայի տեղը կամենում են նշանակել քուրդ Իզմայիլ-փաշային։

—Կ. Պոլսից հեռագրում են 16-ին (28-ին) դեկտեմբերի որ քրիստոնեաներից զօրք կազմելու գիտաւորութիւնը թիւրքերը չուտով կամենում են կատարել, միայն մի քանի բացառութեամբ որ առաջարկել է յունաց պատրիարքը։ Սուլթանը քաղաքային զօրքից ընտրեց իրան համար ադիւտանտներ հինգ քրիստոնեաներին։

—Լոնդոնից հեռագրում են 17-ին (29-ին) դեկտեմբերի որ այն լուրը որ Բրիտանեան կաբինետը Բ. Դրան խնդիրքը միջամտութեան վերաբերութեամբ ընդունել է պաշտօնապէս հաստատվում է։ Այստեղի առաւօտեան լրագիրները միաձայն գովում են Սուլթանի առաջքայլը և մի և նոյն ժամանակ աւելացնում են, որ Սուլթանը դրանից լաւ բան չէր կարող անել և որ նրան մնում էր միայն բոլոր իր գործերը յանձնել Անգլիային։

—«Times» լրագիրը ենթադրում է որ կաբինետի այն վճիռը որ ընդունեց Բ. Դրան միջամտութիւնը բաւական լաւ բացատրոյց է որ ցոյց է տալի թէ Անգլիան դիտաւորութիւն չունէ պատերազմ յայտնել։

—Լոնդոնից հեռագրում են 15-ին (27-ին) դեկտեմբերի, որ լորդ Բիկոնսֆիլդը երեկ գնած Վինդզոր և ընդունվեցաւ թագուհու մօտ, իսկ միւս օր առաւօտ վերադարձաւ Լոնդոն։ Ամբողջ օրուայ ընթացքում մինիստրների խորհուրդ կար։

—Լոնդոնից հեռագրում են 15-ին 27-ին դեկտեմբերի որ «Արևելեան հարցի վերաբերութեամբ ընկերութիւնը» հրատարակեց հրաւէր պարլամենտի ժամանակից վաղ կանչելու առիթով, այս հրաւէրի տակ ստորագրած են հերցոգ Վեստմինստերը, լորդ Շէֆտսբերի և Մոնդէլոին։ Այս հրաւէրի մէջ ասած է որ հասարակական կարծիքը գործերի հետ անծանօթ լինելով, կաբինետի անդամների վատնդաւոր ձգտումների զոհ է դառնում, որոնք ամբողջ տարուայ ընթացքում ամեն միջոց գործ էին դնում Անգլիային խառնել պատերազմի մէջ, Տաճկաստանի կայսերութիւնը պաշտպանելու մտքով։ Հրաւէրի մէջ պահանջում են որ կառավարութիւնը որոշակի բացատրէ ժողովրդեան ամեն դասակարգերին չէզոքութեան օգուտը և վնասակար բողոք են յայտնում պատերազմի դէմ։

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են յայտնել որ ԹԻՖԼԻՍԻ Նահանգի Լոռու գաւառի ՇԱՀՆԱԶԱՐ գիւղի հայ-կաթոլիկ ժողովուրդը դեկտեմբեր ամսին ներկայ 1877 թուի գնեց իր թաղադի Բէյզակ դատեր Նադեժդա Նիկոլայեվնա Ֆիրսովի բաժնի բոլոր հողերը 3157 դեսիատին մեծութեամբ, դեսիատինը 10 բուբլի հաշվելով. Շահնազարի հասարակութիւնը կանխիկ վճարեց իր հողատիրոջ 10,000 բուբլ, իսկ 10,000 բուբլն էլ պէտք է վճարէ առաջիկայ 1878 թուի յունիս ամսին։ Մնացեալ 11570 բուբլ ևս պէտք է վճարեն դեկտեմբեր ամսի մէջ 1878 թուին։ 3157 դեսիատին տասն բուբլով կանէ 31570 բուբլ։ Բոլոր կուպչինները հաստատելու, պոշլինի և նոտարիուսի ծախսերը եղել են 3000 բուբլ։

* * *

Մեզ խնդրում են յայտնել, որ ՇԱՀՆԱԶԱՐ հայ-կաթոլիկ գիւղում հիմնվում է մի ծխական ուսումնարան և հարկաւորութիւն կայ մի ուսուցչի։ Ուսուցիչը պէտք է իմանայ հայերէն և ռուսերէն լեզուներ։ Առարկաները կաւանդվեն հայերէն լեզուով և պէտք է աւանդվի ի հարկէ և ռուսերէն լեզու։ Ուսուցիչը կը ստանայ 200 բուբլ տարեկան և մի և նոյն ժամանակ կը ստանայ իր օրական ապրուստը ալիւրով, իւղով և այլն։ Պայմանների մասին կարելի է խօսել Թիֆլիսում Աւետիք Էնֆիաճեանցի գրավաճառանոցում։

ԾԱՆՈՒՑՄԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1878 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ ШЕСТОЙ

Въ 1878 году *Тифлисскій Вѣстникъ* будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1878 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ достави. . .	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой. . .	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи. . .	12 »	6 »
За границу по почтовому союзу.	15 »	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ въ редакцію *Тифлисскаго Вѣстника*.

Ստորագրութիւն 1878 թուի համար
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
«ԴՐՕԷԲԱ»

1878 թուին կը հրատարակվի մի և նոյն պրոգրամայով և մի և նոյն ժամանակներում այսինքն ԱՄԵՆ ՕՐ ինչպէս և այս տարի.

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում. խմբագրութեան մէջ, Սերգիեվսկի փողոցի վրա Ի. Գ. Ամիրաղովի տանը, № 8 «Քաղաքային Դումայի մօտ».

Օտարաքաղաքացիք դիմում են իրանց պահանջով «Դրօէբա» լրագրի խմբագրութեանը հետեւեալ հասցէով. Въ Тифлисъ въ Редакцію газ. «Дроэба».

Մէկ տարվանը. . . .	8 ր. — »
½ տարվանը. . . .	5 » 50 կ.
4 ամվանը. . . .	3 » — »

Ծանօթութիւն. Բացի վերոյիշեալ ժամանակներից ուրիշ ժամանակ ստորագրութիւնը չէ ընդունվում։

Подписка на 1878 годъ.

ПОЛИТИЧЕСКАЯ И ЛИТЕРАТУРНАЯ ГАЗ.

ДРОЭБА

въ 1878 году будетъ выходить по той же программѣ и въ тѣже сроки, т. е. ЕЖЕДНЕВНО,

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ

въ Тифлисѣ: въ редакціи, на Сергіевской улицѣ, домъ И. Е. Амирагова, № 8 (около Городской Думы).

Въ Тифлисъ въ Редакцію газ. „Дроэба.“

ПОДПИСНАЯ ЦѢНА

На годъ	8 р. — „
½ года	5 „ 50 к.
4 мѣсяца	3 „ — „

Примѣчаніе. На другіе сроки, кромѣ поименованныхъ, подписка не принимается.

1—3

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ. 1877.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՅՑ (Դեկտեմբերի 29-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլումպերիալը)	8	45
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1480	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1200	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	228	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	226	—
Մարսելի կուրսը 250—50	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	80
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	50
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	265	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	9	15
» միւս տեսակը.	9	15
» չաքարաւազը.	8	60
» տրանզիտը. .	8	80
» մաքսը վճարած	13	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	9	50
Միւս տեսակը հին սերմից.	9	—
Բուրդը թուչի . . .	7	50
» թարաքամի .	4	50
Ալիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	14	80
Մետաքս Նուխվայ. .	157	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	54	—
Կոֆէն մօկօի. . . .	30	—
» լիվանի . . .	—	—
» ժարտինկօյինը	28	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. .	4	
Գերմանիա . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 բուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիոն . . .	12. 13	
Միխայլովո. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5· 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՅՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիչէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկոլով երեխաների և ներքին հ.։

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Բէյլիս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակստ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակստ կրծքային և ջղային Սօկոլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակստ վեներական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և մէջային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Բէյլիս աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հ. Սօկոլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՂՈՒԲԱ. Ն. Բ. Դուք մեզ ուղարկեցիք 12 բուբլ երկու բաժանորդագին։ Մենք այդ ընդունում ենք որպէս երկու բաժանորդի կէս տարվայ վճարը և կուղարկենք ձեզ «Մշակը» մինչև յուլիս։

—ԽԱՐԿՕՎ. Ա. Մ. Կարելի է, ինչի չէ։ Բայց ինչ է պատահել ձեզ հետ որ յանկարծ մեր գրականական բարբառը թողնելով, սկսեցիք գրել Տաճկաստանի հայոց լեզուով։

—ԳԱՆՁԱԿ. Ն. Ա. Տ. Ն. Տարին վերջացաւ և մենք չուտով կազմել կը տանք «Մշակը»։

—Վ. ԱԳՈՒԼԻՍ. Ց. Մ. Ց. Ուղարկեցինք ձեզ մի նամակ, սպասում ենք պատասխանի։

Дозволено Цензурою 29 Декабря 1877 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ